ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2011թ. սեպտեմբերի 1 թիվ86-Ա

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի հուլիսի 6-ի թիվ 1308-Ա հրամանի համաձայն իրականացված մոնիթորինգի արդյունքները, Ա. Հովհաննիսյանի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի բացատրագիրը՝ *կարգադրում եմ.*

1. Աշխատանքային պարտականություններն ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Արթուր Հովհաննիսյանին հայտարարել նկատողություն:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ԱՍԱԿՅԱՆ